Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 3-ի N 1192 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են հետախուզվող տրանսպորտային միջոցները հաշվառելու համար անհրաժեշտ փաստաթղթերը կազմելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն (այսուհետ՝ ինֆորմացիոն կենտրոն) ուղարկելու, հետախուզվող տրանսպորտային միջոցները հաշվառելու, հաշվառումից հանելու և հաշվառման փաստաթղթերի պահպանման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) հետախուզվող տրանսպորտային միջոցի տեղեկատվական-որոնողական քարտ (այսուհետ՝ քարտ) (N 1 ձև)՝ հաշվառման փաստաթուղթ, որը լրացնում է քրեական հետապնդման մարմինը՝ հետախուզվող տրանսպորտային միջոցի տեղեկատվական-որոնողական քարտի դասակարգչի հիման վրա.

2) հետախուզվող տրանսպորտային միջոցի տեղեկատվական-որոնողական քարտի դասակարգիչ (այսուհետ՝ դասակարգիչ) (N 2 ձև)՝ պայմանական ծածկագրերի ամբողջություն, որոնք անհրաժեշտ են քարտը լրացնելու և քարտում նշված տվյալներն ինֆորմացիոն կենտրոնի քարտադարան մուտքագրելու համար.

3) հաշվառում՝ հետախուզվող տրանսպորտային միջոցի վերաբերյալ լրացված հաշվառման փաստաթղթի ընդունման, դրանում նշված տեղեկությունների մշակման, համակարգման ու պահպանման գործողություններ.

4) հետախուզվող տրանսպորտային միջոցների քարտադարան (այսուհետ՝ քարտադարան)՝ պահոց, որտեղ հավաքվում, մշակվում, համակարգվում ու պահպանվում են հետախուզվող տրանսպորտային միջոցների վերաբերյալ քարտերը և տեղեկությունները:

3. Հետախուզվող տրանսպորտային միջոցն ինֆորմացիոն կենտրոնում հաշվառման վերցնելու համար հիմք է հանդիսանում քարտը, որը լրացնում է քրեական հետապնդման մարմինը՝ դասակարգչի համաձայն:

4. Քարտը, այն լրացնելուց հետո 24 ժամվա ընթացքում, քրեական հետապնդման մարմինն ուղարկում է ինֆորմացիոն կենտրոն՝ հետախուզվող տրանսպորտային միջոցը հաշվառման վերցնելու համար:

5. Քարտում նշվում են քրեական գործի համարը, քրեական գործի հարուցման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը), քրեական հետապնդման մարմնի անվանումը, հետախուզվող տրանսպորտային միջոցի տեխնիկական տվյալները՝ մակնիշը, մոդելը (ընդունված միջազգային անվանումներով), թողարկման տարեթիվը, տրանսպորտային միջոցի տեսակը, համարանիշը, համարանիշի հիմնագույնը, սեփականության ձևը, ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթղթի (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, առուվաճառքի պայմանագիր և այլն) տվյալները, համարակիր ագրեգատների (շարժիչի, հենասարքի, թափքի (կցորդի) համարները, նույնացման համարը՝ (VIN), բեռնատար տրանսպորտային միջոցի թափքի (խցիկի) գույնը, տրանսպորտային միջոցի գույնի լրիվ անվանումը, հաշվառման վկայագրի համարը, ինչպես նաև առանձնահատկությունները (վնասվածքները, վերանորոգման հետքերը, պիտակները, տեղակայված լրացուցիչ սարքերը և այլն), տրանսպորտային միջոցի հետախուզման համար հիմք հանդիսացած դեպքի կատարման ամսաթիվը և վայրը, տրանսպորտային միջոցի պատկանելությունը, այսինքն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ իրավաբանական անձանց անվանումները, կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը, անձնագրի համարը, քաղաքացիությունը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ

իրավաբանական անձանց գտնվելու վայրը, ֆիզիկական անձի բնակության վայրը, դեպքի կատարման նկարագրությունը:

6. Ինֆորմացիոն կենտրոնում ստացված քարտերն ստուգվում են՝ անհրաժեշտ տեղեկատվության (պարտադիր դաշտերի՝ մակնիշի և համարակիր ագրեգատների) առկայությունն ապահովելու համար:

7. Անհրաժեշտ տեղեկատվության բացակայության դեպքում ինֆորմացիոն կենտրոնը մեկ աշխատանքային օրվա ընթացքում քարտը հետ է ուղարկում քրեական հետապնդման մարմին, որը քարտում համապատասխան ուղղումներ կատարելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում այն ուղարկում է ինֆորմացիոն կենտրոն:

8. Ինֆորմացիոն կենտրոնում ստացվող քարտերի հիման վրա ձևավորվում է քարտադարանը:

9. Ինֆորմացիոն կենտրոնը հետախուզվող տրանսպորտային միջոցների մասին տվյալները, հաշվառման վերցնելու օրվանից 10 օրվա ընթացքում, եթե տրանսպորտային միջոցը հաշվառումից չի հանվում, հաշվառում են Անկախ պետությունների համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) մասնակից պետությունների միջպետական ինֆորմացիոն բանկում:

10. Հետախուզվող տրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու հիմքերն են՝

1) հետախուզվող տրանսպորտային միջոցի հայտնաբերումը.

2) քրեական գործի վարույթի կարճումը:

11. Քրեական հետապնդման մարմինը սույն կարգի 10-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված հիմքերի առկայության դեպքում 24 ժամվա ընթացքում համապատասխան գրություն է ուղարկում ինֆորմացիոն կենտրոն՝ հետախուզվող տրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու համար, նշելով հաշվառումից հանելու հիմքը և ամսաթիվը:

12. Ինֆորմացիոն կենտրոնը սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետում նշված հիմքի առկայության դեպքում հետախուզվող տրանսպորտային միջոցը հաշվառումից հանում է անմիջապես, իսկ 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված հիմքի առկայության դեպքում՝ ոչ շուտ,

քան քրեական գործի վարույթը կարճելու օրվանից 10 տարի հետո՝ բացառությամբ սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքի:

13. Ինֆորմացիոն կենտրոնը հաշվառումից հանված՝ հետախուզվող տրանսպորտային միջոցը սահմանված կարգով հանում է նաև ԱՊՀ մասնակից պետությունների միջպետական ինֆորմացիոն բանկի հաշվառումից:

14. Հաշվառումից հանված քարտերը հանվում են քարտադարանից և պահվում արխիվում՝ 3 տարի, որից հետո ոչնչացվում են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՔԱՐՏ
ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ

1. Քրեական գործի համարը _____ 2. Հարուցման ամսաթիվը (օօ/աա/տտ) _____

3. Քրեական հետապնդման մարմնի անվանումը _____

4. Մակնիշը, մոդելը _____ 5. Թողարկման տարեթիվը [ ] 6. Տրանսպորտային միջոցի տեսակը [ ]

7. Համարանիշը _____ 8. Համարանիշի հիմնագույնը [ ] 9. Սեփականության ձևը [ ]

Ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթղթի (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը, առուվաճառքի պայմանագիրը և այլն) տվյալները _____

10. Շարժիչի համարը _____ 11. Հենասարքի (շասսի) համարը _____

12. Թափքի (կցորդի) համարը _____ 13. Բեռնատար ՏՄ թափքի (խցիկի) գույնը [ ]

14. Նույնացման համարը (VIN) [ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ]

15. Գույնի լրիվ անվանումը _____ 16. Հաշվառման վկայագրի համարը _____ N _____

17. Առանձնահատկությունները _____

_____

18. Դեպքի կատարման ամսաթիվը _____ 19. Դեպքի կատարման վայրը [ ]

Քարտի դարձերեսը

20. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, _____
իրավաբանական անձի անվանումը _____

21.Ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը _____

22. Ծննդյան ամսաթիվը (օօ/աա/տտ) _____ 23. Անձնագրի համարը _____

24 Պետական կամ տեղական
ինքնակառավարման մարմնի, կամ _____ (հանրապետությունը) _____ (մարզը) _____ (բնակավայրը)
իրավաբանական անձի գտնվելու վայրը
կամ ֆիզիկական անձի բնակության վայրը _____ (փողոցը) _____ (շենքը) _____ (բնակարանը)

25. Քաղաքացիությունը _____

26. Դեպքի նկարագրությունը _____

_____

_____

Քարտի լրացման ամսաթիվը _____

Քարտը լրացրեց _____ (պաշտոնը, կոչումը) **Պետ** _____ (կոչումը, ազգանունը, տորագրությունը)

_____ (ազգանունը, ստորագրությունը)

Հեռախոսահամարը _____

Ձև N 2

ԴԱՍԱԿԱՐԳԻՉ

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՔԱՐՏԻ

Համարը	Ծածկագիրը	Քարտի բաղադրիչների անվանումները
1	թիվ	քրեական գործի համարը
2	ամսաթիվ	քրեական գործի հարուցման օրը, ամիսը, տարեթիվը
3	տեքստ	քրեական հետապնդման մարմնի անվանումը
4	տեքստ	տրանսպորտային միջոցի մակնիշը, մոդելը
5	թիվ	թողարկման տարեթիվը
6		տրանսպորտային միջոցի տեսակը՝
	01	մարդատար ավտոմեքենա
	02	բեռնատար ավտոմեքենա
	03	ավտոբուս
	04	մոտոցիկլետ, մոտոսայլակ, մոտորոլլեր
	05	կցորդ (կիսակցորդ)
7	թիվ	հաշվառման համարանիշը
8		հաշվառման համարանիշի հիմնագույնը (ֆոնը)՝
	01	սպիտակ
	02	սև
	03	դեղին
	04	կարմիր
	05	կապույտ
	06	համարանիշ չի տրվել
	07	համարանիշ չի ունեցել
9		սեփականության ձևը՝
	01	պետական
	02	մասնավոր
	03	համայնքային
10	թիվ	շարժիչի համարը
11	թիվ	հենասարքի (շասսի) համարը
12	թիվ	թափքի (կցորդի կամ կիսակցորդի) համարը
13		բեռնատար տրանսպորտային միջոցի թափքի (խցիկի) գույնը՝
	01	սպիտակ
	02	կարմիր
	03	դեղին
	04	կանաչ
	05	կապույտ
	06	շագանակագույն
	07	սև

	08	բազմագույն
	09	այլ գույն
14	թիվ, տառ	տրանսպորտային միջոցի նույնացման համարը (VIN)
15	տեքստ	տրանսպորտային միջոցի գույնի լրիվ անվանումը
16	թիվ	հաշվառման վկայագրի համարը (տեխ. անձնագիր)
17	տեքստ	առանձնահատկություններ (վնասվածքներ, վերանորոգման հետքեր, լրացուցիչ սարքավորումներ և այլն)
8	ամսաթիվ	դեպքի կատարման օրը, ամիսը, տարեթիվը
19		դեպքի կատարման վայրը՝
	01	փողոց
	02	հրապարակ, զբոսայգի, պուրակ
	03	բակ
	04	պահպանվող ավտոկանգառ
	05	չպահպանվող ավտոկանգառ
	06	ավտոկայան, երկաթուղային կայարան
	07	օդանավակայան
	08	խանութ, շուկա
	09	ճանապարհ, մայրուղի
	10	մերձքաղաքային գոտի
	11	այլ վայրեր
20	տեքստ	պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, իրավաբանական անձի անվանումը
21	տեքստ	ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը
22	ամսաթիվ	ֆիզիկական անձի ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը
23	թիվ	ֆիզիկական անձի անձնագրի համարը (սերիա, համար)
24	տեքստ	պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, իրավաբանական անձի գտնվելու վայրը, ֆիզիկական անձի բնակության վայրը
25	տեքստ	ֆիզիկական անձի քաղաքացիությունը
26	տեքստ	դեպքի նկարագրությունը